


ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

36^{րդ} ՏԱՐԻ



ՇՈՒՄԹ 17 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3894

ՄԱՍՆԱԿԱՆ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 70 դր. եւ օտար երկրաց համար 15 ֆրանք: Բաժանորդագրութեան դրկելու է առ մատակարարութիւն Սրբեկէլի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

- Ազգ. Տեսութիւն. Հայուն թշնամին.
- Հայ նախնիներէն ի Բագու. (ՄՇԱԿԻ բանասիրականէն քաղուած):
- Գիտական. Մանրագէտ ու ժամանակակից բժշկութիւն. (Մ. ԿՈՍՏԱՆԴՆԱՆ):
- Կոյն սու. Լուսին. Քերթուած. (Մ.):
- Իգտիբէն Երևան, Ռեխտաւորի Տեղագրութիւն. (ՆՈՐԱՅՐ):
- Հաւաքածոյ գեղեցիկ խօսքերու. (Յ. Մ. ՏՈՒՏՈՒՄԵԱՆ):
- Վեպ. Հայաստանի բարբեր. Սիսակ և Սոսու, Բերութեան սոխակներ. (Ղ. Պ. ՆԱՂԱՊԵՏԵԱՆ):
- Քաղաւած Շաբաթական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ա Չ Գ Ա Յ Ի Ն ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ ՈՒ Ն Թ Յ Ն Ա Ս Ի Ն

Շատ անգամ կը գանգատինք թէ Ռուս կառավարութիւնը մեր ազգին դէմ թշնամական և ազգակուլ ընթացք մը բռնած է, թէ ի գաւառս մեր հայրենակիցք երբեմն դժուար դիրքերու մէջ կը գտնուին, թէ մեր առանձնաշնորհունք զանազան արգելքներու կը հանդիպին, թէ օտար կրօնաւորք մեր ազգայիններն Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ գիրկէն բաժնել եւ անջատելու համար ամէն կերպ անխտտովանելի հնարքներու կը դիմեն: Այս եւ այս կարգի գանգատներ անպակաս են հրապարակին վրայ, եւ կարծէք թէ յատկապէս կը տարածենք զանոնք որպէս զի մեր թերութիւններն եւ պակասութիւններն թաքուն մնան:

Առանց այս գանգատանաց ճշմարտութիւնն որոնելու, պիտի մղուինք ցաւ ի սիրտ, յայտարարելու թէ ասոնց և ոչ մէկը կրնայ այնչափ կործանարար և վտանգաւոր լինիլ հայութեան համար որչափ կրնայ կարծուիլ, եթէ հայն ինքզինքին վնասարեւը չը լինի:

Իբր ապացոյց վեր առնենք մէկ քանի օրինակներ:

Կաթողիկոսական ընտրութիւն կը լինի, գիտենք թէ այս ինչ Սրբազան չը կրնայ վաւերանալ Ռուսական կառավարութեան կողմէ, եւ զայս գիտնալով երբ կ'ելլենք չ' թէ նորա արժանեացը համար, այլ վասն զի ոմանք կը փախաքին ազգին սիրած եւ յարգած մի եկեղեցականին ընդդիմադիր մը հանելու համար զայն կաթողիկոսական ընտրելի նշանակել եւ այսպիսով պարտապետելու Ռուս կառավարութեան մերժումը հրաւիրել, կը հարցնենք ո՞վ է հայ ազգին թշնամին, Ռուս կառավարութիւնը թէ մենք հայքս:

Հայաստանի մէջ մեր խեղճ հայեր կը ներդուին նիւթապէս և բարոյապէս, հետաքրքիր եղիր եւ պրպտէ պատճառներն, պիտի տեսնես, որ հոս վանական մ'է որ կը կեղեքէ ժողովուրդը, հոն վաշխառու մ'է որ մեծ մեծ տոկոսներով եւ բողիցածութեամբ կը քամէ ժողովրդեան արևուն, անդին սառնասիրտ հարուստ մ'է որ իւր խաւարամիտ ողիովը կը ջլատէ եւ կ'ըսպաննէ ամէն կրթական ձեռնարկ. — րանք ո՞վ է հայուն թշնամին, եթէ ոչ ինք: —

Գաւառներէ իմաց կը տրուի մեզ թե օտար կրօնաւորք ամէն կողմ տարածուելով կ'աշխատին հայերը անջատել իրենց մայրենի եկեղեցիէն. բնական էր որ այս լուրքը մեզ յուզէին, ի՞նչ պէտք էր ընել ուրեմն այսպիսի վտանգի մը հանդէպ, եթէ ոչ աշխատել որ մեր եկեղեցականք երթան ու պահպանեն մեր հայրենակիցներն իրենց նախահարց սուրբ կրօնին մէջ. ո՞վ է յանցաւորն այս պարագային մէջ. մեր հոգեւորականութիւնն որ կը թերանայ իրեն պարտաւորութեան մէջ, թէ այդ օտար կրօնաւորք:

Եւ դոկիտայ մէջ մէկ քանի երիտասարդ հայեր անվտանգ մէկ քանի կերպեր կը սովորին, եւ կը գտնուին այդ քաղաքին մէջ անխիղճ եւ խաւարամիտ հայեր որք խիղճ չեն ընել կառավարութեան մատնել այդպիսի անվտանգ իրողութիւն մը. կը հարցնենք ո՞վ է մեր թշնամին, եթէ ոչ այդպիսի վատհոգի հայեր:

Ազգային շահեր պաշտպանելու նըպատակաւ լրագիրք կը դրեն յօդուածներ եւ կը գտնուին թերթերու խրվաղ իրներ որք խիղճ չեն ընել երթալ տարբեր եւ չար կերպով մեկնել առ որ անկ է այդ յօդուածոց իմաստը. կը հարցնենք ո՞վ է հայուն թշնամին, եթէ ոչ հայ ազգն ինք որ կը քաջալերէ այդպիսի թերթեր:

Ազգային Երեսփոխանական ժողովն յետ բազում վիճարանութեանց և բանակցութեանց կը յաջողի Քաղ. ժողով մը ընտրել եւ նորա անդամք տեսնելով ազգային գործոց վիճակն, առ սէր ազգին կ'ընդունին իրենց տրուած այդ պաշտօնն: Իրաց այս վիճակին մէջ ի՞նչ պէտք է ընեն այդ ժողովոյ կազմութեան դէմ բողոքող Երեսփոխանք. յայտնի է թէ պէտք է իրենց բողոքք բերեն առ Ազգ. ժողովն առ ի պարտու պատշաճ տնօրինութիւն. փոխանակ այսպէս վարուելու, կը լսենք թէ ինչպէս Պատրիարք Սրբազանին նոյնպէս Բ. Դրան բողոք ներկայացուցած են որով աշխատած են մեր ներքին գործոց մէջ կառավարական միջամտութիւն հրաւիրել. կը հարցնենք թէ ո՞վ է մեր թշնամին:

Մեր տղայք եւ աղջկունք մեծ թոշակներով օտար վարժարաններ կը դըրկենք եւ այսպիսով կը թունաւորենք մեր նոր սերունդն օտար գաղափարներով. կը հարցնենք ո՞վ է մեր թշնամին, չե՞ն կրնար արդեօք այդ տղայոց և աղջկանց ծնողք միանալով հաստատել իրենց փափաքածին պէս վարժարաններ եւ այսպիսով օգտակար ըլլալ հանրութեան. մենք կ'ըսենք թէ կրնան այդպիսի ձեռնարկութիւն մը ընել, բայց չեն ընել, վասն զի զուրկ են ընկերութեամբ գործ տեսնելու գաղափարէն:

Կրնանք այս կարգի օրինակներ դեռ շատ տալ, բայց աւելորդ աշխատութիւն մը ըրած պիտի լինինք, վասն զի ի վերեւ նշանակած մեր օրինակներն բաւական իսկ են ապացուցանել մեր առաջադրած սա բացորոշ ճշմարտութիւնը թէ հայն է հայուն թշնամին:

Ուստի պարտք կը սեպենք հրաւեր կարգաւ ամէն հայերու, թէ լինին նոքա աշխարհական թէ եկեղեցական, որ խորջին այսպիսի ազգակործան ընթացքէ. եթէ ամէն հայ իւր պարտքը կատարէ, մարդարէ պէտք չէ ըլլալ գուշակելու համար թէ քիչ ժամանակէն մեր ներքին վիճակը կը բարեփոխի այնչափ որ մեզ զարմացնէ:

Խորշիլ ազգամիտ և ճշտումներէ, քաջալերել ազգ. բարենպատակ ձեռնարկներ, հարուածել եւ չեղարացնել վնասակար հաստատութիւններն և գործեր, հեռացնել վնասակար գործիչներն. այս պէտք է լինի մեր ամենուսկէտ նպատակին:

ՀԱՅ ԱՄԻԹԱԳՈՐԾՔ Ի ԲԱԳՈՒ

Ամեն օր աւելի եւ աւելի հետաքրքիր է դառնում Բագուն: Բալախանայի առաստ նաւթի շնորհով քաղաքը եւ առաւելագէս Սեւ քաղաքը այնպէս են կերպարանափոխուում, որ մարդ իր մի տարի առաջ տեսածը բոլորը մոռանում է, նկատելով նորանոր փոփոխութիւններ, միշտ դէպի լաւ, միշտ դէպի կատարելագործվածը: Ամեն օր Բագուն եւ Սեւ քաղաքը առաջադիմում են: Արժէ հետաքրքրվել Սեւ քաղաքով. հարիւրաւոր մարդիկ կան նոյն իսկ հէնց Բագունի մէջ, որ չը գիտեն թէ ինչ մի ներքին բարեփոխութիւնների են ենթարկվել Սեւ քաղաքը եւ գլխաւորապէս հայերի գործարանները:

Չանազան ժամանակներում հայ գործարանատէրերի անունները մեծ հռչակ են ունեցել ամբողջ Շիրվանում, որոնց այժմ մնում է կրկնել «աւաղ փառացս անցանորի» կամ «եւ ես ունէի մի փառաւոր անցեալ»: Բայց անցան այդ փառաւոր ժամանակամիջոցները, չքացան երկուանոցները, յայտնվեցան նոր նոր տուններ, Միրզոյեանի եւ Բաղիրեանի անունները էլ յաճախ չէք լսի, նրանց տեղ այժմ՝ Նորէլ, Բոտչիլդներն են յայտնվել: Յայտնի չէ ապարիզից հեռացած հայ անունների տեղը, ապագան ո՞ւմն է վիճակել հայերից: Սակայն եթէ ապագայում չունենանք ամենախոշոր դրամատէրեր, ինչպիսին է Բոտչիլդ, կամ գէթ Նորէլ, տարակոյս չը կայ, որ դռնէ նշանաւոր հարուստներ կունենանք, միայն թէ հայերը լինէին քիչ մի հեռատես: Այդպէս ասում ենք նրա համար, որ նրանցից մի քանիսը իրանց գործարանները անլով իրանց այլադէի ընկերների ձեռքը, իրանք բաւականանում են մի քանի հազարներով. կամ թէ, մի քանիսը իրանց նաւթահորերը եւ հողերը Բալախանայում օտարներին են ծախել. միայն ապագայում կիմանան նրանք իրանց արած այդ ահագին խոշոր սխալը, բայց ուշ կը լինի:

Առաջնակարգ տեղ բռնում են հայերի գործարաններից, կասպեան ընկերութեան, Բուզազեանի, Աղամեանի, Ամիրեանի, Թաղոսեանի, Ալանեանի, Եղիազարեանի, Մելիքեանի եւ Եահղեղանեանի, Քալանթարեանի, Մելիքեանի (Բ), Թարայեանի, Մարտիրոսեանի, Բաղիրեանի, Նաջարեանի, Կրտսիլիկեանի, Ծատրեանի, Օրբէլեանի եւ վերջապէս Ռաֆայէլեանինը: Եւ եթէ գործերը այդպէս աջող ընթանան, ինչպէս ներկայումս, որ շատ եւ շատ հաւանական է, ապա պէտք է կարծել, որ սրանք բոլորն էլ մեծամեծ յոյսեր են տալիս: Երեք տարի առաջ մտնելով այդ գործարաններից որն էլ կամենայիք, մարդ տեսնում էր սարսափելի պատկերներ եւ կեղտոտութիւն. տանջվում էր մշակը եւ մամուլի մէջ դատապարտվում էր գործարանատէրը, փողոցները նաւթալճերով լի, սև անբաժան ծուխը առատութեամբ թափվում էր և ծաղբերով նստում ամեն մի ծակուծուկում, սեւացած էր լինում եւ գործարաններին չընկալաւոր ամբողջ մթնոլորտը. սեւ էր եւ ծիտը, եւ շունը, ամեն ինչ, եւ բոլորը, որ 2-3 ժամ դադար էր առնում Սեւ քաղաքում. այդ ամենուց յետոյ պարզ է, թէ ինչու այդ գործարանների քաղաքը ստացաւ Սեւ քաղաք անունը: Բայց երեւի երկար չի տեւի, կարճ ժա-

մանակի ընթացքում Սեւ քաղաքը կատարելագէս կը կերպարանափոխվի, եւ սեւի հետքը բոլորովին կը չքանայ: Ոստիկանութիւնը արդէն ձեռնամուխ է եղել փողոցները մաքրել եւ մայթել տալուն, նաւթանցքերը կարգի բերելուն, եւ վերջապէս պատերը ցանկացած գոյնով ներկել տալուն:

Շատերի համար գուցէ եւ հետաքրքիր լինի թէ մի օր եւ է առաջնակարգ գործարան, օրական քանի փուղ կարտադրի: Մեր յիշած հայ գործարաններից միայն Պ. Պ. Բուզազեանի և Աղամեանի գործարանները զտում են միասին օրական տասը հազարից մինչ 12 հազար փուղ: Մնացեալները երկու երեք հարւերից մինչ երեք չորս հազար, կասպեան ընկերութիւնը մինչ 15 հազար եւ աւելի: Երբեք մինչ քսան հազար, Նորէլ մինչ վաթսուհի հազար փուղ, և ինչ: Պ. Երբեք մի գործարանը ունենում է ամեն տարի դեֆիցիտ, նրա հեռատես տէրը ստացած օգուտը միշտ գործադրում է իր գործարանի ընդլայնացնելուն: անպագայում այդ Ֆիրման մեծ հռչակ կունենայ: Յիշեալ Ֆիրմաներից շատերը, ամբողջ նաւազնացքի ընթացքում, որ հայտնում է 7 ամիս (սկսած մարտի 15-ից մինչեւ հոկտեմբերի 15-ը) ցանկացողներին վաճառում են և հասցնում մինչ մի քանի միլիոն փուղ:

Ներկայիս բոլոր գործարանների որոշ թիւը են դժուարութեամբ կարողացայ իմանալ. ինչպէս ասում են նրանց թիւը հանում է մինչեւ 150ի:

Աւելացնելու է եւ նոր շինվողների թիւը, որ հասնում է 50ի. ուրեմն շուտով բոլոր գործարանների թիւը կը հասնի երկու հարիւրի: Նոր շինվողների մէջ կան եւ մեծերը, օրինակ Պ. Պ. Ե. եւ Մ. ընկերութեան, որը ունի 12 կաթսայ, ամեն մէկը 1,100 փուղ անոց:

Հայերից նաւթակիր նաւեր ունեցող ոչ ոք չը կայ: Մի փոքրիկ ընկերութիւն առաջ կառնված 40 մարդոց, այժմ 7-8ից, ունի մի նաւթակիր շոգեխաւ «Արմենակ» (ինչու՞ Նրմենեակ): Ամեն բան հայերը արին, միայն նաւեր չունեցան. եթէ չը լինէի Փիթոյեանցի «Մասիս» ընկերութեան երեք նաւերը՝ «Անի», Սեւան եւ Մասիս», եւ յետոյ Պ. Թումայեանցի «Սերեօթան» եւ «Կոտանդիլը», պէտք է ասէիք, որ ամօթ մեզ, մի նաւ էլ չունենէք գոնէ թուրքերի հարիւրաւոր նաւերի արանքում: Իրանը հայերը հաւատացնում են, որ մի նաւը երկու երեք տարում շատ հեշտութեամբ հանում է իր գինը: Հեշտ աշխատանքի համար մեռած հայ վաճառականը էլ ի՞նչ է ուզում աւելի: Միթէ ամօթ չէ՞. յոյնը հասկացել է այդ օգուտը եւ Յունաստանից բերել է իր նաւերը, մինչ մեր թիթակ ահագին ծովից մենք օգուտ չենք կարողանում բաղել:

(Մշ-Է)

Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Մ Ա Ն Բ Ա Գ Ե Տ

ՈՒ ԺԱՄԱՆՈՒԿԱԿԻՑ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Պ. Է. Մօնէն, որ մօտերս շահեկան հատոր մը հրատարակած է Փոխանցական Հիւանդութիւն անունով, կը ստուերագրէ յաջող ձեռքով մանրադէտին առաջդիմութիւնն ու

արդի բժշկութեան մէջ ունեցած մեծ կարեւորութիւնը. մանրադէտին կատարելագործումը թերեւս մի քանի անբուժելի ախտերու դարմանը պիտի գիտնէ, վասն զի բուսային մանր ու անտեսանելի նիւթեր ու որդեր կ'առնեն այս օրինակ հիւանդութիւններն ու պիտի վերջանան այս անտեր մարդկային ազգին պատուհաս լինելէ, երբ ջնջօրին ամբողջովին այդ միջատներն ու բոյսերն: Հետեւաբար, ընթացողաց գաղափար մը տալու նպատակաւ կը թարգմանենք հետեւեալ յօդուածն:

Մանրադէտի գիտութիւնը, տարրաւոր ծովներէ յետոյ, բժշկութեան առաջդիմութեան ամենամեծ ծառայութիւններ մատուցած է: Արդարեւ մանրադէտը ժէ գարուն մէջ գտնուած է, այլ ասոր յաշիւնակներն այս գործիքին արդի կատարելագործումներէն եւ ճարտարագիտական կատարելութիւններէն յետոյ սկսած են երեւիլ, Նիւնուէի վլատակներուն մէջ գլտնուած սպանապակիներէն ու զմբուստի սպանապակիէն սկսելով, որոյ մէջէն կարճատեսն Ներոն սրամարտիկներու կոխները կը դիտէր, մինչ այն մեծարժէք ու արդի անդոյն մանրադէտներն, որոց զանազան բաղմամբն ու խիստ լաւ դասակարգեալ մասերը կարծես կատարելագործման nec plus ultra (ո՛չ աստի աւելի հեռի ու ոչ աստի անդին) են:

Բժշկական մանրագրութեան (micrographie) հիմնարկուն եղաւ Օթոն Վան Լէուվէնհայք, որ գտաւ, տասնեօթներորդ գարուն վերջերն, արեան կարմիր գնդիկներն, այսինքն այն հաստատուն, թանձր մասը մեր — «հեղուկ մօին» (chair courante) — կարմրագոյն գնդիկներն, որոց սրամագիծն է Օ հազարամեթր 005, եւ գունաւորութիւնն այսօր ծանօթ է իբր մի երկաթային սկզբան՝ այսինքն արիւնագործ ման (hematose) պատկանող: Աւշային ու մազանման խողովակներու գիւտերն, յետոյ Մալմիրիկէն ու Սվամէրտամէ հաստատուելով՝ պատրաստեցին Հարվէյի արեան շրջանին վերաբերեալ անմահ աշխատութիւններն: Այս ատենէն սկսեալ, մանրագէտը բնասութեան մեծ նպատակ մատոյց. դնդերային նեարդներու, զգային հիւսկէնին մանր մասերու, ճարպի ու կաթի գնդիկներու և ինչ հետզհետէ օրուն կազմաւորութիւնն երեւան երևելով՝ ծանօթացուցին իրենց գործառնութեանց եղանակն:

ԺԸ գարուն մէջ մանրադէտին գործածութիւնն այնչափ չափազանցեալ էր որ մեծապէս պիտի յետադիմէր այս դարու սկիզբն, երբ Պիլայի հանձարը նախորդ մանրագիրներու նիւթերն համեմայն դասակարգելով հրատարակեց «Ընդհանուր Մարդկագրութիւն» անունով գիրք մը (1801), առաջին երկ մանրագրութեան: Պիլա 21 հիւսկէն կ'որոշէր, Եվան եւ Ելայտէն որոց Ռէմէք ու Վիրխով շարունակեցին ու հաստատեցին 1852ին Բըլլայն տեսութիւնն, որ առողջական երեւութից ու ախտաւոր վերքերու գոյացման նկատմամբ շատ նոր գաղափարներ կը պարունակէր:

Մանրադէտին պարտինք խել մը միջատային ախտերու ծանօթութիւնն, որք կը գոյանան մարմնոյ վրայ գտնուած փոքրիկ կենդանիներէ ու մանրադէտական բոյսերէ: Բացի մանրասերմերէ (microspore), և սնդակային խողովակին անէթէլլա (aspergillus), հովտայուշանին որդասունակն (oidium), մորթային հերթոյսերու (tricho-

phyte) ախտերն, և ինչ, ասընկեր են, որք, ճանչցուելէ յետոյ դիւրաւ ջնջուեցան բժշկութեանէն. նոյնպէս միջատային մասնուներն, ինչպէս նոսրածայրերն (leptomite), կծակայններն (oscillaire), բերանի նոսրահերներն (leptotrix), ստամոքսի սարսիններն (sarcine), և ինչ:

Մարդոց պարզագոյն (helminthe) ու վրայններն (hydatide) ծանօթութիւնն, երիզորդերու (taenia) ուսումնասիրութիւնն եւ իրենց հետաքրքրաշարժ ձեւափոխութիւններն, վերջապէս ամեն որդերու սերմն ու իրենց հաւկիթներու կամ որդերու գոյացման թափանցելու համար, հերամիջատներն, իրենց զանազան հանգստավայրերն, գաղթումներն ու ընդլայնումներն, յաջորդական ձեւափոխութիւններէ յետոյ եւ... ամեն ասոնց անհրաժեշտ եղած էր մանրադէտին կիրառութիւնն:

Գարուս սկիզբներն, երբ հիւանդ մը կը քոսանար, շատ տարիներ արիւննաուսմներու, մաքրողականներու, արենամաքրականներու (dépuratif) դատապարտեալ էր. յաջորդաբար ասոնց արդիւնքի կ'ընէր հիւստիալային բժշկութեան (médecine humorale) ամբողջ գանելի դեղերն: Նաբուլօն բազմաթիւ տարիներ քոսախտէ վարակեալ մնաց. այն ժամանակի մի քանի բժիշկներ այդ «սոփորական այտոււմին» վերադրեցին փոր-աղիքային (gastro intestinal) յոյզերն որք պատրաստեցին քաղցկեղն եւ վերջապէս այս ախտէն մեզաւ Աէնթ-Հէլէնի տարադիրն: Այսօր, ամեն որ գիտէ թէ քոսն որդեղային այտոււմ'է, վերամորթին մէջ կը գոյանայ ապարուտ (acarus) մը ճանապարհներու (sarcophe) տեսակէն, որ իւր ակունները մեր մարմին տակ կը փորէ ու հոն կը տեղաւորէ իւր բազմամեղամ ընտանիքն: Ոչ մի կարելի անպատշաճութիւն տեղի պիտի ունենար եթէ բըժըշկուէր (երկու ժամերու միջոցին, որպէս այսօր կը գործադրուի) պարզ չփոսմերով, դիւցաղին այս գրոսաի բառեակին որ Ռուսիայ տը Լիլի կը վերագրուի:

Տեսայ մեծ հիւստատուն, ամեն բան պիտի ընէ ինձ համար, Ո՛հ, իր բարութիւնն անհաւասարելի է: Ձեռքս սեղմեց, և պաշտօն մը խոստացաւ: Աւա՛ղ, հետեւեալ օրն... քոսախտ ունէի:

Միջատային վարդապետութիւններն, զորս Ծ. Վ. Ռասպայը կը ներկայէ մեզ մեծ հանձարով, մի քանի տարիներէ ի վեր մանրագէտի վերջին կատարելագործումներու պատճառաւ մեծ առաջընթացութիւններ ըրած են: Հիմա, իւրաքանչիւր հիւանդութիւն խօթագրական չըմանակին մէջ դասակարգուելէ, փոքրիկ մասնաւոր գործարաններին մը՝ Բիւրօյի՝ գերիշխանութեան ներքեւ (այլ չը գիտցուիր թէ՛ պէտք է դասել զայն կենդանեաց թէ՛ բոյսերու մէջ), Բարեխառնութեան, օդի ազդեցութեան տակ, հեշտ միջավայրի մը մէջ ի մի բան, Բիւրօյի տեսակին ու արագ հիւանդութիւններ պիտի կարենար առաջ բերել: Այս հիւանդութիւնները կը դասակարգուին նեխոտ հիւանդութեանց մէջ, ինչպէս ամախոտ (rouget), թիֆուս (typhus), թոքախտ, պարբերական ջերմն (fièvre intermittente), բոլեան, և ինչ, դասուած են Բիւրօյիներու հիւանդութեանց մէջ: Եթէ այս տեսութիւններն հաստատեալ լինին, ապա պարզ բժշկութիւնը խիստ դիւրութեամբ պիտի կարենայ արդիւնք ու առաջն առնուլ հիւանդութեանց փոփոխութեան, այսինքն պատուաստով կամ այլապէս կենդանի մար-

մինն ապականուէ վերապահել: Ակներեւէ թէ քանի որ վիրաբոյժներն, յատկական գարնաններով, վերջերս միջնորդի մասնիկներու ազդեցութեան տակ չեն դներ, հին վիրաբուժութեան նեխոտ խառնուրդներն աւելի հազուադիւր եղած են:

Մանրադէտի կարեւորագոյն կիրառութեանց մին է, բժշկին կատարած բուժադատական (médecine judiciaire) հարցերու լուծումն: Արեան, կաթի կամ ուրիշ հիւստիալային բիւրեղներու քննութիւնն ամբաստանեալին համար յաճախ խիստ դժուար քննութիւն մ'է որ արդարեւ ասոնց մանրադէտի օգնութեան անկարելի է: Միմիայն, մանրադէտական պատրաստութեամբ մը կարելի կը լինի որոշել մարդու արիւնն անասնոյ արիւնէն, այրի մազերը՝ կիներու և տղայոց մազերէն և ինչ: Միմիայն մանրադէտն է որ կարող է հաստատել տարակուսելի բիւրեղներու նոյնութիւնն, որ կը հայցուի բարձրագոյն, եւ դատաւորները պարտին անսալ, վասն զի ամբաստանութեան ամենահաստատուն ապացոյցներ կրնայ հայթայթել:

Մ. ԿՈՍՏԱՆԴՆԱՆ

ԿՈՍՏԱՆ ԱՌ ԼՈՒՄԻՆ

Երբոր գիշեր սեւասնգոյր թեւօքն ստուերց՝ զինչ վարագոյր, իրնէ՛ վերայ բնութեան թատեր, իւր մոգ տեսութեամբն յուզել սրտեր,

Քանի՛ քաղցր է յայնժամ, Լուսին, Մոռնալ ամէն հաճոյք ունին, Աւլուած քո շողերուն, Ման գալ արբիւն ու մոլորուն:

Ման գալ ծովփուն՝ ուստ թէ մեկին Մակոյկ կեանքին, միշտ կ'հասնի Անընկնոց, մի հանգրուան Երանութեանն աներկեան:

Եւ օրօրուիլ նշուիր հետ Այն դիցափառ ալեացն ի վէտ, Ոյց մերթ արծաթ փրփուրները Մնան գեղոյ, սիրոյ մայրը:

Ման գալ մէջ այն ազին դրախտին, Աւր գծնիկն իսկ չի՛ փչոտի, Եւ ուր հոգիս մեղամաղձոտ Քեւ իւր սիրոյն ընու կարօտ:

Եւ յայն ծաղկանց ծոցն, ուր, Լուսնակ, Քնեն, տերեւն առած վերմակ, Թող ինձ նեխուիլ, զինչ չոյ մ'աստղի, Թեւերուդ մէջ լուսածղի:

Եւ հոն գոյգ մի ի բաց հանգոյն, Ձոր կը փակէ նոյն քաղցր բուն, Մեղրանուրջին մէջ, ա՛հ, մարիլ, Եւ հետդ յԱստուած սլանալ, վառիլ:

Քաղցր է ման գալ քեզ հետ, Լուսնակ, Երբ մերթ, դժխոյ նորապսակ, Ձայտղեր բո՛ շուրջ սիւսած նաժիշտ, Եւ սոխակներն՝ քեզ երածիշտ:

Եւ մերթ՝ որպէս կոյս մ'ամօթեալ, Երկնոտ գէմբիդ չգար ձգած, Ձիւնափրփուր ամպերն երկնի, Գոգ սիրելոյդ՝ գնաս զինի:

Աւ Աստուծոյ աչքի մի պէս, Նայիս անթարթ, ամենատես,

Կամ զինչ անչէջ փարոս մ'յերկին, Յոյց տաս կուսին զանքոյթ ուղին:

Կոյս, որ՝ պէս հին յաւերժ-հարսանց Միշտ ի ծո՛ւնըր ու գրկարաց Պաշտէ զքեզ, տաճար կանգնէ Հո՛ն ուր շողոյդ մին նըշուէ՛:

Շողերուդ մէջ միտք իմ՝ իւր լոյս, Սրտիկս՝ իւր իղձ, հոգեակս՝ իւր յոյս, Գտնէ եւ կեանքս՝ իւր ապառնին, Ձի գիշերոյս ս'րփն ես, լուսին:

Եւ երբ լապտերդ Աստուածալա, Հաճիս լսես զիս խանդալա, Շողերդ առնում, ա՛հ, ինձ կանդեղ Երնեմ ի ձեւ հետդ ամեն տեղ:

Մերթ ի նոճիս սգատերեւ Դողդոջէ՛ լուս, շիրմաց վերեւ, Աւ սիրելոյն այցին կարօտ Նշխարց ձօնել սիրոյ նարօտ:

Մերթ պլլլլալ ներսն հիւզեկին, Տա՛լ լոյս անլոյս որբին, հիբլին, Աւ արցունքի սրտարիւնին Խառնել ժողիան սփոփումին:

Ե զի յաւերս այն եղեմի, Աւր խեան ու սէր միշտ գէմ գէմի՛ Լինին ինչ որ ցարդ փշատան Շողա՛լ, շինե՛լ նոր բուրաստան:

Ե զի քնե՛լ, յայն խոտոց ծոց Ձոր մանդաղըն ի ժամ հնձոց, Մոռնայ, եւ զոր շողերուդ բոց, Երջանկացն հետ կ'ընէ՛ օթոց:

Լուսին, դու իմ Բեւեւ-Աստղն ես, Հոգիս՝ մագնէտն, զոր քեզ քա՛շես, Շողդ ինձ ժպիտ, ցողդ՝ ինձ արցունք, Կազմեն կեանք իմ մաղձոտ և՛ անձուկ:

Մէջ մութ ցայգուն ա՛յգս ես պայծառ, Մէջ տխրանաց՝ հրճուանքս անձառ, Հոգիս առ քեզ միշտ սիրատարփ, Ձինչ լուսնկայ ծաղիկն առ սրփ:

Սասոյ, դու սեղան, և ես անդ քեզ Եմ երկնայոն մի օղջակէզ, Այրէ՛, խառնէ՛ զիս շողիցդ հետ, Եւ փայլեցո՛, հետդ առ յաւէտ:

Գատրգիւղ

ԻԳՏԻՐԵՆ ԵՐԵՒԱՆ

(ՈՒԽՏԱԽՈՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ)

Գ.

Օրացոյցի մատնանիշ ըրած զուարթ օրերէն մինն էր. նստանք հանրակառք Իգտիրի հաշտարար դատարանի առջեւ, եւ անցնելով հասարակաց պարտիզին մէջտեղէն, հեռացանք զիւրաքաղաքէն: Մեր չորս կողմը կը գտնուին այգիներ, պարտէզներ, արտեր եւ սեխաստաններ՝ պաճուճուած գանազան ծառերով, երփներանգ ծաղիօք և ամէն տեսակ բանջարեղինաց, հացարուսից ու մրդեղինաց բոյսերով, արդիւնք աշխատասէր բնակչաց քրտանց: Մեր իմանալի կամ տեսանելի հորիցանը ծածկուած է հիւսիսէն Մասիս, հարաւէն՝ Արագած լեռներով, իսկ արեւելքէն եւ արեւմուտքէն ընդարձակ դաշտերով, որոց մէջ ուրախալի է

տեսնել որ ափ մը դատարի գետին չը տեսնուիր չը վարուած, չը ցանուած. թէ ո՛րչափ բերկրացուցիչ է այս տեսարան մեզ համար չէ կարելի իմ տկար գրչին բացատրել: Մեր երկիրը՝ Թուրքիա, առաջ հող կայ գործող չը կայ, իսկ հոս՝ Ռուսաստան, գործող կայ՝ հող չը կայ: Մարդկային գործուն ձեռքեր ամէն ինչ իրենց պիտայից ընտելացուցած են. շինած են հաստատուն արքունական ուղիներ, ձգած են կամուրջներ՝ գետերու, վտակներու եւ առուակներու վրայ: Ասով ալ չը բաւականանալով՝ իրենց անձրդի երկիրը կենդանացուցած են Երասխի եւ իւր օժանդակաց ջրերը շատ մը առուներու բաժնելով, այնպէս որ ամէն պարտէզ, ամէն արտ եւ ամէն սեխատան ու գիւղեր ունին իրենց յատկացեալ բաժին ջուր, առանց որոյ կարելի չէր բնակութիւն հաստատել այդ կարի շոգ եւ անձուր Արարատայ դաշտին մէջ: Մեր ճանապարհորդած արքունական ուղին կ'անցնի շատ մը գիւղերու մէջէն, յորոցմէ կը հոգայ անցորդն իւր ուտեստի պիտայքն: Այս գիւղերէն զատ սպահնութեան համար կան նաեւ զորաց պահականոցներ ճանապարհին վրայ, որ ֆօշօ կ'անուանին: Այսպէս շարունակելով մեր ուղին, կուգանք Արամայի նահապետի թոռան Երաստի անունը կրող Երասխայ կամ Գեհնի առջեւ, մերձ ի Մարգարի գիւղ, ուր տըխուր կ'երեւի, ներկայ տարւոյ դարնան ընտած կամուրջին եւ իւր եզերքի գիւղօրէից փլատակաց հետքերն: Հոս լսելով գետին յորդութեան և մակընթացութեան ժամանակ պատճառած հարիւր հազար մանէթի վնասու պատկառելի հաշիւը, մարդոց կորուստն եւ ծնողաց աղիողորմ հառաջանքը, կ'անցնինք տխուր սոգաւորութեան մը տակ եւ կը հասնինք Գարա-Սու՝ որ է նախնի մեծամոր վտակն օժանդակ Երասխի: Գարա-Սու կամ Սեւ-Ջուր վտակի կամուրջն հաստատուն եւ կանգուն է. անցնելով իւր վրայէն, հասանք՝ Իգտիրէն 38 վերստէն Վաղարշապատ՝ Արշակունի թագաւորանիտ հին քաղաքն, որ կանխաւ արքունի ձմերանոց էր Հայոց, եւ ապա եղաւ ըրիտանդանութեան խանձարուր Արքայի Լուսաւորչի հիմնադրին Հայաստանեայց Եկեղեցւոյ 237 հայոց թուին, հոն ծնելովն: Այս քաղաք դարերէ հետէ այժմ իսկ կը կոչուի Վաղարշապատ՝ Տիգրանեան Վաղարշ Գ. ի անուամբ, եւ շինուած է Արարատայ համանուն դաշտամասին վրայ մերձ ի Շրէշ բլուր կամ Գըզըլ, առանց պարսպի, որ ի գիրս կը յորջորջուի նաև Արտիմէտ, Վարդգէս աւան, Նոր-քաղաք եւ Քաղաքադաշտ: Ունի 810 տուն բնակիչ, տասն ուսու, մնացեալը Հայ, որոց մէջ բողոքական մի բանի անձնաւորութիւնը ալ կան, առանց ժողովարանի և վարժարանի նման Ռուսաց: Հայք ունին մի եկեղեցի Ս. Աստուածածին անուամբ առանց ճակատագրի, որոյ համար պատմեց ութսունամեայ ծերունի մը ինձ թէ անցեալ տարի կրով ծեփած են. իսկ 27 տարի առաջ ալ Երեւանցի Սիմէոն Կաթողիկոս փայտաչէն եկեղեցւոյն տեղ կանգնեցուցած է այս բարուկիր եկեղեցին, որ ունի հինգ բահանայ եւ իւր կուշտ երկու ծխական վարժարան, մին արական, իսկ միւսըն իգական: Ժողովրդեան եկեղեցասիրութիւնն արգահատելի է, այնպէս որ կիւրակէ օրերն իսկ հազիւ հազ հինգ անձ ազօթող կ'ունենայ: Ժողովրդեան ապրուստի միջոցներն են երկրագործութիւն, խանութաւնութիւն, վաճառականութիւն եւ

սպասարարութիւն: Նիւթական փիճակներն տխուր է, համահասար իրենց բարոյականին, այնպէս որ կը վստան շարագործ եւ լոյն մարդիկ իրենց մէջ, որոց գործած շարութիւնը կը պատմուի թէ Երեւան իսկ տեղի չ'ունենար: Վաղարշապատ ունի ընդարձակ վաճառանոց մը, շրջապատուած աղիւսէ պարըստով որ ունի չորս դուռ, սեպհականութիւն, Վաղարշապատով մէկտեղ, Մայր աթոռոյ վանուց. ունի նաև 324 կանգուն երկայնութեամբ եւ 90 կանգուն լայնութեամբ վանապատկան հասարակաց պարտէզ մը « Բուլվար » որոյ մէջ կան նոտարանք ունի, թեղի, անանխոյ, հացենի, ընկուղենի և, զանազան ծառոց հովանեաց տակ շինուած: Սոյն գիւղաքաղաքն եւս կը կառավարուի դաւառապետութեամբ, « Նաչալնիկ », որ խանայով անուն կրթեալ ընտիր հայ մ'է, եւ որոյ ներկայանալով ընտիր գաղափարներն ստանալու պատիւն ունեցայ: Տեղւոյս կլիմայն վատառողջ, ջուրը վնասակար եւ նուազ, որոյ հետ կը գործածեն նաև սառույց զովացնելու համար: Վաղարշապատից յետոյ այցելած լինելով Էջմիածին, Բիրական, Ս. Գայիանէ, Ս. Հռիփիմէ, Ս. Շողակաթ Աստուածածին, Երեւան եւ իւր խոր-Վիրապ, կը խօսիմք ամենուն վրայ հետզհետէ:

Գ.

Վաղարշապատի հարաւային կողմը կը գտնուի Էջմիածին պարսպապատ վանքն որուն տաճիկը Իւչ-Քիլիսէ կ'ըսեն, Շողակաթ Ս. Աստուածածնի, Հռիփիմեայ եւ Քայիանեայ երեք եկեղեցեաց համար. հոս կը նստի ամենայն հայոց Կաթողիկոսը: Սուրա արեւելեան կողմն է ուստահայոց վառագասկ Գէորգեան հիւշն ձեմարանն, արեւմտեան կողմը՝ պարսպապատ պահպանոցն, հարաւային կողմը՝ Վաղարշապատ հիւրանոցն, իսկ հիւսիսային կողմն՝ հասարակաց պարտէզը: Սոցա միջովայն է շինուած Ս. Գրիգոր Լուսաւորչին իբր 1585 տարի առաջ, կոփածոյ քարերով մայր եկեղեցին, յորմէ յետոյ նորոգութիւնը ալ եղած են: Ունի վեց տաճար, երեքն արեւելեան կողմն, երկուքն՝ հիւսիսային եւ հարաւային կողմերն, իսկ մինն ալ ճիշդ կեդրոնն ուր Յիսուս տեսնուեցաւ Լուսաւորչի եւ կողուեցաւ վանքն Էջմիածին: Այս իջման տաճարը վանդակապատուած է սղիճեայ թափուածոյ վանդակով, որուն վրայ Պարսից Շահէն նուիրուած թանկագին կանթեղ մը կայ, որ միշտ կը վառի: Եկեղեցւոյն զանգակատան և ըն կողմերը կան Կաթողիկոսաց ոմանց շիրիմներն ինչպէս Յովհաննէս Ը. Կորիւնցւոյ, Աղէքսանդրի, Գանիէլ Ա. Պայազիտցւոյ, Աղէքսանդր Բիւզանդացւոյ, Ներսէս Ե. Աշտարակեցւոյ եւ Գէորգ Գ. Կ. Պոլսեցւոյ դամբարանք, որոց տապանագիրք վանուց արձանագրութեանց հետ արտագրեցի: Էջմիածնայ վանուց եկեղեցին ներսէն և դրսէն զարդարուած է Լուսաւորչի, Պարսից Շահին, Հայր Աստուծոյ, Առաքելոց, Մարգարէից եւ Աւետարանի կատարածոց զանդակներով: Էջմիածնի վանքն ունի թանգարան մարանց եւ զգեստեղինաց, տպարան՝ ուր կը հրատարակուի Արարատ ամսաթերթը, մատենադարան, ձաշարան, կաթողիկոսարան, խոհանոց, միաբանութեան սենեակներ, գրափաճառատուն, պարտէզ, այգի, անտառ, զբոսավայրեր, արուեստական լիճ, արտեր, գիւղեր եւ այլ կալ-

ուածներ, շէնքեր, որոց վրայ մանրամասնօրէն Սիմէոն Կաթողիկոս իւր Ջամբա անուն մատենին մէջ յիշելուն, աւելորդ կը համարինք հոս եւս ընդարձակօրէն կըրկնել: Էջմիածին ունի երեսունէն աւելի միաբան կղերականք, որոցմէ են սինօքականք, ձեմարանի կրօնուսոյցն, հիւրընկալը, խմբագիրն եւ աղօթիչք: Գովեստի արժանի է ձեմարանականաց միանուագ երգեցողութիւնն եւ Ս. Հարց կարգապահութիւնն, այնպէս որ յարտասուս կը շորձեն ջերմանադ ուխտաւորները: Վանուց տարեկան եկամուտը կը հաշուուի այժմ 90,000 մանէթ, նոյնչափ ալ ծախք, իսկ Գէորգ Գ. ի օրով 116 հազար մանէթ եկամուտ, 100 հազար ալ ծախք: Վանական սոյն եկամտի աղբււր եղող կալուածոց գրասման եւ կորուստն համար կ'աշխատի Ռուս կառավարութիւնն, որպէս զի հողերն առնէ եւ փոխարէնը դրամ ապ: Ռուս կառավարութեան սոյն ընթացք եւ գաղափար, որուն նպատակն է վանքին ոչընչացումը, չէ կարելի ազգասիրաց սրտին ցաւ չը պատճառել: Արդի ամենայն հայոց կաթողիկոս Տ. Տ. Մակար Սրբազանի մեծամեծ գործեր կան գործելիք, մինչեւ ցարդ Հայրապետական դահ բազմող կաթողիկոսը ունեցած են ինչ ինչ գործունէութիւնք եւ զիրենք անմահացնող յիշատակարանք, Նորին վեհափառութիւնն ալ սիտի ունենայ, եթէ հաստատէ Ռուս տէրութեան հետ ազգին նպատաւոր յարաբերութիւն մը, ձեռքէ չը հանէ ազգին դարաւոր կայուածքներն եւ իրաւունքները, նորոգէ վանուց Մայր եկեղեցին, շինէ ընթերցարան մը եւ հիւանդանոց միաբանաց որոց չըթիւնը ոչ նուազ զգալի է բանիբուն անձանց, երբ կը տեսնուի միաբանք առանց ընթերցանութեան մնացած եւ հիւանդ եղած պահուն իրինց սենեկաց մէջ անխամ պառկած: Այսպէս ուշադրութեան արժանի է Բիրականէն ջուր բերելու խնդիրն, որով կը բարձուի այն անհամակրութիւնը, որ կը տիրէ ի մասին Տ. Տ. Մակար Կաթողիկոսի շատ մը հայերու սրտին մէջ:

ՆՈՐԱՅՐ

ՀԱՒԱՔԱՅՈՑ ԳԵՂԵՑԻԿ ԽՕՍՔԵՐՈՒ

Այժմ ու հարստութիւնը վճուեր են միշտ ամեն բան: Մարդկային կեանքի մեծ խաղի մէջ մարդ խաբուելով կ'սխտի եւ խաբելով կը վերջանայ: Մեծ օրէնքը քաշել գիտնալն է այն ցաւըն, որ անտեղիտալի է: Մեր վիճակը չէ, մեր հոգիի մուլան (trempe) է, որ երջանիկ կ'ընէ մեզ: Թշուառութեան միակ դարմանը դրամ եւ աշխատութիւնն են: Երանի անօր, որ իր բարեկամներու համար կ'ապրի, վայ անօր, որ հասարակութեան համար կ'ապրի: Աշխատիլն է ապրիլը: Նկարագիրով եւ ո՛չ թէ խելքով հարըստութիւն ձեռք կը բերուի: Մեծեր կ'ուտեն փոքրերն, եւ փոքրերը կը խայթեն զանոնք: Պէտք է հաճելի ըլլալ այն անձանց, որոց հետ կ'ապրինք:

Երբ շահի վրայ դառնայ խօսքն, արծիւ
կը կտրին եզներ :

Մեր վարմունք ու ձեռնարկներ մեր
հոգիի մուխէն միայն կախում ունին եւ
մեր յաջողութիւնն հարստութեանն կախում
ունի :

Մարդիկ իրենց վիճակի հոգին ունին
հասարակօրէն :

Կիներ Քրիշնըրիներու (girouette) կը նը-
մանին . երբ ժանգոտին՝ կը կայնին :

Բռնակալութիւնն հարստութեան սը-
տուղն է :

Վրէժխնդրութիւնը լաւ կը քաշէ նա-
խապաշարումի հետ . անոնք , որ մեծ ոճիր
մը կը նիւթեն , խղճմտանք քննողներ ու
խոստովանահայրեր ձեռք կառնեն :

Միծաղը գէշերու ամենէն զորաւորն է .
մեծ հաճոյք մը այն է , որ ծիծաղելով մէկը
լռած է իր վրէժ :

Ամեն մարդ , որ կ'ուզէ լաւ գրել , պէտք
է , որ իր բոլոր կեանքի մէջ սրբագրէ իր
գործերը :

Վաշխառուն ծեր աղուէս մըն է , որ
գառի մորթ կը հագնի :

Սիրէ ամենքը , քիչերու վստահիր :

Փառքը ջրի բոլորակի մը կը նմանի , որ
մեծնալէ չը դադրիր , մինչեւ որ հեռի ծա-
ւալի եւ ոչնչութեան մէջ ցրուի :

Հոգը դարման չէ , այլ հիւժմախոս :

Տգիտութիւնն Աստուծոյ անէժքն է ,
գիտութիւնն՝ այն թեւն՝ որով երկինք կը
թռնիք :

Վախէն դեւերը բերովքէ կ'ըլլան :

Կեանքը մահուան ձանձրոյթն է :

Խորհուրդներուդ լեզու մի տար , ո՛չ
անյարճար խորհուրդի մը իր գործադրու-
թիւնն :

Ընտանի եղիր , բայց երբէք դուռհիկ :

Կռիւի մէջ մտնելէ զգուշացիր , բայց
երբ մէջն ես , այնպէս բռնէ զան , որ հա-
կառակորդը քաշուի քեզմէ :

Ամեն մարդու սկանջղ աուր , բայց քի-
չերու ձայնդ . ամեն մարդու կարծիքն
ա՛ն , բայց վերաստիկէ քո դատումը :

Մարդը դրամի հոգին է , դրամը մար-
դու մարմին , ըսեմ , մէկմէկի երես եւ աս-
տառ :

Յ. Մ. ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

ՄԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (8)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Ին .

Գինիէն ցնցուողի մը պէս , բաւական
զգաստութեան կուգայ Սիսակ : Սոսուն
իր կուսական չքնաղագոյն այտերի վրայ ան-
մեղութեան վարդագոյն գոյն մ'ընդունե-
լով՝ ոտքի կ'ելլեն . գիւղական խրամէնցի *)
ձալը բաւական անցած էր , ծառերի եւ
քարերի շուքերը (ստուերներ) դէպի արե-
ւելք դառնալով՝ օրուան ծերութեան նշան-
ներ էին : Կը քալեն այդ երեք երկնային է-
ակներն ու կը արօրեն նոցա սուրբ սըր-
տերը :

*) Կէս օրէն ետք ժամ ցի միջոցներն
ըրած ձալը , զոր կ'ընեն մեր երկրի բոլոր
գեղջուկները :

Ճամբան ամբողջ զառկներ է , այնքան դը-
ժընդակ եւ սարսափելի կապան , ոյր վը-
րայէն անցած ճամբան շատ լայն չէ քան
նաւուց պարանն . . . կը քալեն բայց ուր
են չ'են զիտեր . երկինք ու երկիր իրենց
աչքին հաւասար կը զանեն . շատ բաներ կը
խօսին , շատ պատմութիւններ կ'ընեն եւ
սակայն այն սրտից ջերմութիւնն որ կը վա-
րէ զիրենք , որպէս մեքենայք , երբէք չը սա-
ռիր :

Ժամը տասներկուօրին կուգար : Արե-
րեգակն իր վերջալոյսի օսկեծաղիկ ճառա-
գայթները՝ Էրուն եւ Շէրվան դաւառաց
միջեւ անջրպետ կաղնոյզ «Քարգալէլ» սէգ
լերան ետեւէն անգամ եւս կ'ծկելով ու
պարզելով՝ հրապուրիչ երեւոյթով մը կ'եր-
վինէր . Մոկաց , Ռչտունեաց , Վասպուրա-
կանի , Տուրուբերանի եւ Աղձնեաց այն սի-
գապանծ եւ գեղատեսիլ լեռնիւրի կատար-
ներն՝ որոց կոնածեւ տեսարանի անթիւ
չարքը բնութեան փարթամ եւ ճոխ վայել-
չութեան տեսարանի հետ կը մարմնացնէին
Սիսակի ուրախութիւնը Սոսունի անձի վը-
րայ , ու մեր այդ տարիայի սոխակները ,
այն ժամուն ապաղ աղբիւրի՝ պողպող
վտակով անած թարմ դաշտերի վրայ նըս-
տած , Սոսուն , Նարգիլ , Նունուֆար եւ
մեխակ , գինեբուկ եւ աղբրանց արիւն ա-
նուշահոտ ծաղիկներէ եղեմարոյր հոտերով
չըջապատուած կը խօսին ու կը խօսին . . .

Գեղեցիկն իր անկեղծ զգացմանց գեղ-
մանց չը կրնալով դիմանալ , շատ անգամ
կը մասնակցի նոցա կատակաց . երբեմն
կը հպի իւր եղօր գրկաց եւ երբեմն Սո-
սունի բնքուչ բազլաց . . . Պարզութեան
այս անուշութեան հետ բաղադրեալ սըր-
բութեան եւ անկեղծութեան ցողը կը վը-
րացնէր տեսնողը :

Վերջալոյսի տկար ճառագայթներն ան-
հետ լինելու աստիճանին մօտիւր Գեղեցիկ
նշմարելով , կ'ստիպէ վանոնք շարունակել
այն ճախն՝ որոյ կէսն դեռ չ'են կտրած :
Բայց բնութիւնը կարծես թէ իւր այս սո-
խակներին կապուած՝ իրեն կը ձգէ զա-
նոնք գրկամած :

Գեղեցիկի դերն որքան փափուկ , նորա
սիրան այնքան սուրբ եւ ժուժկալ . ուստի
իր սիրելեաց դիւրագգածութիւնը չը գըր-
զընելու համար , համառօտ երգի մը մեղա-
մաղձոտ ձայնով ոտքի կը հանէ զանոնք .

Պաղ աղբիւրիկ , պաղ աղբիւրիկ ,
Շատ անուշ է քո՞ զով ջրիկ ,
Շատ գեղեցիկ քո բոլորտիք ,
Թող որ առնեմ իմ սիրելիք :

Սիրելիներս , ժամը ուշ է ,
Մեր ճամբայի վրայ փուշ է ,
Ելէ՛ք երթանք քանի լոյս է ,
Մեր օթարանն դարձեալ դուրս է :

Ոտքի կ'ելնեն Սիսակն ու Սոսուն , ձեռ-
քերին մէկմէկու փախուած , կարծես թէ
մազնիսով միտցած : Սիսակ քալելէն առաջ
գիւմառնարար այսպէս հրաժեշտ կուտայ
պաղ աղբիւրին , սարին ու ձորին .

Շատ չէն մնա , պաղ աղբիւր ,
Եղեմական անմահ ջուր ,
Մնա՛ք բարով , ով ծաղիկք ,
Սարեր , ձորեր եւ երկինք :

Սիսակի այդ հրաշակերտի համառօտ եր-
գըն՝ իր սիրանուագ եղանակաւ կը կախար-
դէ բոլորովին զՍոսուն , ու այդ գաղափա-
րային ոգեւորութեամբ եւ իր հեշտալուր
եղանակաւ կը պատասխանէ այսպէս .

Ո՞վ սուրբ աղբիւր՝ սար եւ ձոր ,

Եւ դու հրեշտակդ՝ մեր մենտոր ,
Վկայ այն քաղցր միութեան ,
Որ՝ կապէ մեզ անսահման :

Ո՞վ իմ կեանքի տէր հրեշտակ ,
Անուշ անուն՝ պերճ Սիսակ ,
Այս օր , այս ժամ չէ ինձ փառք ,
Մեր միութիւնն է իմ փափագ :

Համարյոք հեղիկ քո սկան ,
Ո՛հ , պաղ աղբիւր սիրական ,
Համարյոք ծաղկանց ու թռչնոց ,
Նուագածուք մեր հոգեոց :

Սոսուն՝ որ գեղջիւկան սուրբ եւ անա-
բառ կեանքի անբիծ կազմուածքով կը պատ-
կերէր իր վրայ դիցարանական յաւերժա-
հարսի մը նազելափառ տիպարն , այնքան
սրտանց եւ այնքան հոգեւայլմամբ կ'երգէ
գայդ «Մնաք բարով» սի պարզ եւ գուլտրիկ
երգն որ , Սիսակն եւ Գեղեցիկն արբշիւ կը
մնան քանի մը վայրկեաններ ու յետոյ ըս-
թափելով Սիսակ՝ գինիէն աղատուող մէկու
մը պէս կը մտածէ . անընդհատ Սոսունի
սիրազեղ գէժքի վրայ գոյգ մ'արեգակաց նը-
ման վտուող պայծառ աչքերին նայելով
գիտես թէ կը փոխանակեն մազնիսական
զօրութեամբ մը սրտերնին . . . Կը հեշտա-
յին ժպիտների հետ՝ մերթ կը խառնուի
նոցա սիրատենչիկ ակներէն սահող աղի
արտասուաց այն մարգարտափայլ կըր կա-
թիլներ՝ որոնք թանալով նոցա վարդագեղ
այտերն՝ առաւօտեան զով ցողէն սնած գե-
ղաթոյր վարդից նման գեղեցիկութեան հը-
րապուրիչ փայլ մը կ'զգենուին . . .

ԻԶ .

Արեգակն արդէն իր վերջին շողերն ամ-
փոխած եւ ցորեկուան ժամերն եղերած
էին : Երեկոյեան կենսատու զով զեփուռ
իր մեղմիկ ճոճումներով կենդանութեան
աշխոյժ մը կը սփռէր ամեն կողմ , Բնու-
թեան այդ սոխակներն՝ յալոյտակուած ե-
րեւակայական եւ իրական երջանիկ երազ-
ներով կը սկսին քալել . . .

Այն ժամերն որք բաւական թուով ան-
ցան նոյն օրուան ճամբորդութեան մէջ ի-
րենց վրայ , վայրկեաններ կը թռնին : Ու
մեր սիրավառ սոխակները՝ մերթ երգելով ,
մերթ խօսելով , մերթ կայնելով եւ մերթ
երազելով գիւղերուան ժամ երեքն անցած
կը ժամանեն լեռնարօտի հիւզերը . . .

Վարդ խաթուն տեսնելով Սոսունի այդ-
քան ուշանալն՝ անպայման մատաանջու-
թեան մ'երկունք մթազնած էին իր գորո-
վալից աչքին ու խիստ անհամբեր եւ վրդո-
ված սրտով մը , հիւզերէն դուրս՝ ծաղկա-
ւէտ եւ հոտաւէտ դարատափի մը վրայ
բարձրացած՝ երկու թեւերը վտառեկ ար-
ծուի մը նման աջ ու ձախ կողմերէն կու-
հած՝ անթարթ աչքով Սոսունի ճամբան կը
դիտէր . այն պահուն իրեն կը մերձենայ
կատակերգակ մանուկն ու իր մասնադի-
տութեամբ կը յայտնէ թէ՛ Սոսունը մինակ
չէ , նա ունի իր ընկերներն՝ որոց սրտերն
իրար կը խառնուեր , թէ ինքն իր գալու
միջոցին տեսած էր զանոնք պաղ աղբիւրի
վրայ : Նաև անուղղակի ներքին մտք մ'ալ
կ'ուզէ պարզել Վարդ խաթունին Սիսակի
և Սոսունի մասին . « Խաթուն ձան , է՛ր կը
մատածես ու կը տանջուիս , միթէ դուն դեռ
լսած չե՞ս այն առած որ կ'ասեն մեր պա-
ռաք , աղջիկ եւ տղամարդ երբ գտնեն
զիրար՝ կը բացուին որպէս վարդ ու կը մոռ-
նան ամեն դարառ : »

Վարդ խաթուն թէեւ Սիսակի եւ Սո-
սունի մասին չչուկ մը լսած էր ուրիշ ան-

գամ ուրիշներէ, բայց կատարեալ վատահոլութեամբ չէր հետաքրքրուած անով: Զաւեշտ մանուկի այդ խօսքերը՝ թէ և մասամբ մեղմեցին իր մայրական բոցակէզ սրտի ցաւերը, սակայն միւս կողմէ բարեցիցին նորա մտաց այնպիսի մտածումներ՝ որոնք շատ անգամ կ'ընկճեն հասարակ մահկանացուներն:

Այն ինչ Վարդ խաթուն իր կեցած բարձրութենէն աչերը միայն արթնացնէր յաճած՝ լուսնի նիւթը լուսով կը դիտէր այն ուղին՝ ուրկէ իր սիրեցեալ սոխակները պիտի գային եւ մտովի մտածմանց ուղիւնի մէջ ընկզմած՝ կը յուզուէր Սիսակի և Սոսունի խնդրովը, բաւական հեռուէն արեք զլուսնէր նշարեց, որոնք կը ճոճային գաղափարաց եւ սրտից փոխարինման անուշ եւ անկուշտ գրոյցներով: Իւր ուշադրութիւնն ամիսփեց Վարդ խաթուն, եւ երկու ականոցիքն անոնց վրայ կեդրոնացընելով իւր փնտռածներն ըլլալը հաստատեց եւ գուարթ երեւոյթով մը սպասեց . . .

Երկու վայրկեան չ'անցած իր առջեւ կայնած էին այն սոխակներն որոց նոյն օրուան կեանքը երգելով ու երազով թռած էր շուտով:

Վարդ խաթուն իր թեւերը կը տարածէ Սոսունի չքնաղ հասակի շուրջն՝ ու մայրական խնդապատանօք եւ համարներով կը դիմաւորէ գայն. ուրբախութեան ժպիտներին հետ միացած արտասուաց կաթիլներն իր փափուկ սրտի յայտարարը կը կազմեն: Սիսակն ու Գեղեցիկը մասնակից էին այդ գոգանաց՝ քանի որ Վարդ խաթուն իրազէի էր նոցա մէջ եղած գաղտնեաց. յետոյ, իրենց խուզը (հիւզ) ուղղելով ընթացքին, Վարդ խաթուն քաղցրութեամբ մը կը հարցնէ Սոսունի.

Էր այդքան ուշ մնացիք, ճամբան ինչ պատահեցաւ, եթէ քանի մը վայրկեան ալ չերեւէիք, խեղճ կորսնցնողի մը նման գիւղը պիտի գիտէի: Սիրելի աղջիկս, ես կը կարծէի թէ գու մինակ էիր, բայց ինչպէս որ գիրար գտած էիք . . .

Ա՛խ, մայրիկ, դու մի՞թէ չը գիտես որ քո աղջիկն այնքան անխնայ չէ . . . Իր սիրտն որ անարատ թղթի մ'է նման, միայն անուն մը արձանագրուած է նորա վրայ. շատ անգամ կ'ազդուի եւ այն անուան ձեռքողականութիւնը կը գերէ զինք: Գուք արդէն փորձառու էք, մայրիկ, խնդրեմ որ չը մեղադրէք ձեր փոքրիկ աղջիկն:

Այս խօսքերը կ'արտասանէր Սոսուն այնպիսի երեւակայական ազդեցութեան մը ներքեւ՝ որ մայրն յուզուեցաւ եւ իր դըստեր այդ պատասխանէն որոշ իմաստ մը ըմբռնելով, աշխատեցաւ համեստութեան եւ ժուժկալութեան փաստերը ձեռք առնել եւ խրատել իր սիրելի Սոսունը որ տարփանաց կիզիչ արեւուն ջր մատնէ իր կենաց գեղեցիկ գարունն. « Եթէ Աստուած կամեցած և ճակտիդ վրայ գըրուած է, արդէս կը միանայ. եթէ չէ, բըւնի ո՛չ ինչ չըլլար, հօգիս, շատ մի նեղուիք եւ մտածեք, ես ալ ուրախ եմ ո՛չ թէ յարաբերութեանդ տեսակին վրայ, այլ ընտրած երիտասարդի մտին: Սիսակի նկատմամբ ես ալ մասնաւոր համարում ունէի, սկզբէն սիրտս կ'եռար նորա վրայ. գիտես թէ մէկը կը թելադրէր ինձ այդ բանն. երթանք ննջենք աղջիկս, զգուշ մնացէք որ չ'զգացնէք մեր գիւղացիք: Այս բառերը դեռ Վարդ խաթունի բերանն էին, ու զիրենք հիւզերի մէջ կը գտնեն: Սիսակն ու Գեղեցիկը նոցա ետեւէն կուզային նոյն քան յամր եւ անուշ գրոյցներով՝ ո՛րքան

քաղցր նոյն օրուան յիշատակը: Կը մերձենան Վարդ խաթունին, եւ անուշութեամբ մը « գիշեր բարի » ըսելով եւ հոգեզմայլական ժպիտ մ'ալ Սոսունի արձակելով իրենց հիւզակը կը մտնեն: Վարդ խաթունն եւ Սոսուն կը պատրաստուին ննջել. եւ որպիսի՛ երազներ կ'ուզան օրորել այդ հրեշտակագեղ կոյսի անուշ քունը . . .

Ի՛նչ .

Գիշերուան ժամ Յին կը մերձենար, և կիսամեայ լուսնոյ անարատ բոլորակը Մուկաց աշխարհի հսկայ եւ ձիւնապատ լեռանց կատարների վրայէն լողալով իր հիւանդագին դիմաց ծիծաղկոտ լուսով ջահաւորած էր ողջոյն սարն եւ ձորն: Բնութիւնը խոր լուսութեան մէջ՝ շունչ կ'առնէր կարծես գործելէն: Ոչխար եւ դուար իրենց փարսի մէջ անհոգ եւ հանգիստ ընկողմնած հովիւների եւ հաւատարիմ շանց՝ հոկողութենէն շրջապատեալ կորոճային ունեք իրենց ցորեկուան պաշարն եւ ունեք կը նընջէին ապշած: Ոչխարաբոյժ կանայք եւ հարսներ, արք եւ երիտասարդներ իրենց անշուք հիւզակներին մէջ քաշուած կը խորքային անհոգ եւ հանգիստ ինչպէս ծուարող թռչնոց խումբին: Սիսակեց հիւզակ, կազմուած էր պարզ եւ անտաշ քարերէ. առաստաղը ծածկուած էր՝ քանի մը փայտով եւ թփերով. լուսնոյ անշուք ճառագայթներն առանց դիմադրութեան ներս կը թափանցէին: Սիսակն եւ Գեղեցիկ իրարու քով նստած խիստ մօտիկ դեռ ընանալու մտադրութիւն չէին տածեր, ըստ որում՝ ցորեկուան երջանիկ ժամուց ուրուականը գրաւած էր նոցա միտքն եւ ուշադրութիւնը: Սիսակ կը մտածէր եւ մըտովի կ'երեւակայէր կեանքի այն խուերն որ երիտասարդ և սիրահար սրտից կը պատկերին յաւէտ: Երեւակայական այդ երեւոյթի ազդեցութեամբ, մերթ կ'երգէ այս բառերը.

Գիշեր բարի եւ բուն քաղցր է այն չքնաղ կոյս էակաց, Որոց սնարին՝ յար աչքը բաց Նստած զմայլի մի արարած:

Սիսակի ձայնն որ կը նմանէր սոխակի ձայնին զիշերուան այդ վեհ լուսութեան մէջ իր սրտագրաւ թրթռումներով կ'երթար բազմաթիւ Սոսունի քաղցրալուր ականջին ու սըրտի թելերին որ անքուն աչքով գլուխը յարգէ բարձի մը կաթնած, մեղմիկ արձագանք կուտար իր պաշտած սրտի տխուր եւ զըուարթ հառաչանաց:

(Շարունակ էլ)

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ
 Շ Ա Բ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ
 Հոկտ. 10էն 16
 Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Բարիգէն կը հեռագրեն թէ երեսու ժողովն 155ի դէմ 372 ձայնիւ ընդունել էր Պ. Գիւլէտ Կ. Օրմանայի մէկ առաջարկն որ կը պահանջէր յանձնախումբ մ'անուանել՝ քննութիւն մը բանալու համար պատուանշանաց առեւտուրին վրայ: Այս յանձնախումբն ան-

դամները պիտի ընտրուին յառաջիկայ հինգշաբթի:

Նախարարապետ և երեւմտից նախարար Պ. Ռուվիէ ժողովոյն ներկայեց օրինական ծրագիր մը՝ 4½% արժէթուղթերը 3% թ վերածելու համար:

— Այս երեքշաբթի օր այրեր է Փրանսական Հիւսիսային շոգեխաւն Մարսիլոյ նաւահանգստին մէջ: Հիւսիսային կը վերադառնար Նիւ - Եորքէն. վնասը կը հասնի քանի մը միլիոնի:

— Հռովմէն կը հեռագրեն թէ Նախարարապետ Պ. Գրիսթի, ի թուրին իրեն ի պատիւ տրուած հացկերոյթի միջոցին մեծ ատենաբանութիւն մ'ըրաւ, յորում հաստատեց Իտալոյ և երբեակ դաշնակցութեան խաղաղասէր աշխարհավարութիւնը. Պ. Գրիսթի ջերմ համակրութիւն յայտնեց Փրանսայի համար:

— Վիէնայէն կը գրեն առ Թայպո. Վարըն, հրովարտակաւ մը որ ի մօտոյ պիտի հրատարակուի, պիտի գեղէ եղեր օտար երկրէ եկած բոլոր ապրանայ մաքսատուրքերն, ի բաց առեալ Գերմանիոյ ապրանքներն: Այս տնօրինութիւն փոխարինութիւն մ'է այն կուսոյն զոր Գերմանիա բացած է ուստական արժէթուղթերը կոտորելու համար:

— Թանձէրէ Բարիզ հասած նորագոյն տեղեկութեանց նայելով, Մարքի կայսեր առաջնութեան լուրերն անստույգ են միշտ: Զրոյց կը պարտի թէ ապստամբութիւն մը ծագեր է Մարքի հարաւակողմն, այլ ապստամբներն յաղթուեր են՝ 360 մարդ կորսնցնելով:

— Գերմանիոյ կայսրը հոկտ. 10ին Փարանսայի սպայ մը ընդունելով, հաւաստեք է նմաթէ խաղաղութիւնը չը պիտի վրդովի եւ թէ կ'ուզէ հանդարտ մեռնիլ:

— Բեդրասուրկի Պաշտակաւ Լաքիէն « յատուկ թղթակիցն », Աղբիւնուպոլսէ նամակ գրելով, ուշադրութիւն կը հրաւիրէ պուլկար գիւղացոց մէջ կաթովիութեան վտանգ աւար կերպիւ ծաւալման վրայ, մասնաւոր Սղբիանուպոլսոյ նահանգին մէջ: Որովհետեւ ուրիշ աղբիւրէ կը հերքուի կաթովիութեան Պուլկարաց մէջ այս աստիճան յառաջ իմելուն գրոյցը, կ'ենթադրուի թէ Ռուսիոյ կառավարական լրագիրք, այսպիսի հրատարակութիւններ ընելով, նպատակ ունին ոյժ տալ ուսու պառավարութեան այն զիտողութեան թէ օրթոտոքս Պուլկարաց իշխանը կաթովիկ պէտք չէ լինի:

— Ժուրնալ որ Սէն Բեդերպոլսի կը հրատարակէ բողոքագիր մը՝ Պուլկարաց ընդգրկման իր կուսակցութեան գաղտնի մասնախմբին կողմէ, Սոսլանյէի վերջին ընտրութեանց դէմ: Ի Ռուսիա ապստամբեալ պուլկար գաղթականք եւս երկար բողոքներ կը հրատարակեն ուստ լրագրաց մէջ:

— Աւստրիոյ լրագիրք ոմանք ձեռք առնցուցած են եւ կը հրատարակեն քանի մը գաղտնի տեղեկագրեր, զորս 1859էն մինչեւ 1849 զրկած է Պ. Միխայէլ Բոնիտին՝ Համալուսութեան նախագոյն առաքելոց մին՝ առ իւր աշակերտն, որ եղաւ ապա Ալէքսանդր Բ: Այս տեղեկագիրք կը ցուցնեն թէ այդ թուականներուն Ռուսիա սկսած էր արդէն կազմուորել համալուսական գործին քրօֆակապա մը Չեխերու մէջ: Աւստրիոյ դերման լրագիրք, յիշեցնելով արդի Չեխերուն ուստասէր արտայատութիւնները, կ'ըսեն թէ Դաւիթիէ կ'ուսին նախարարութեան թիկունք եղող Չե-

խերն եւս Պ. Բոկոտինի գաղափարներով տողորեալ են :

—Անցեալ շարժու Վիէնայի մէջ ձերբակալուած է ուսուցչական մը Լոյի Եանեիչ անուն , որ Քորէնհակ կ'երթայ եղեր Չարին կենաց դէմ փորձ մը փորձելու : Սյա չարագործ երկու տարի յառաջ Բարիզ կ'երթայ , ուր մտէն կը դիտեն զինք ուսուցչականի ոստիկանը , եւ Վիէնա գալուեն , կը ձերբակալուի ուսուցչականութեան պահանջմամբ , որ իրեն յանձնուիլը կը պահանջէ , ծանուցանելով թէ այս մարդ մասնակցած էր Սլէքսանդր Բ. կայսեր սպանման : Ետեւէիչ , որ թողբախտաւոր է , Վիէնայի բանտին հիւանդանոցին մէջ կը դարմանուի :

Ն Ե Ր Ք Ի Ն

Նախարարաց ուսանց անդամակցութեամբ նոր յանձնաժողով մը կազմուած է որ պաշտօն ունի խորհիլ այն միջոցներու վրայ զորս հարկ է ձեռք առնուլ 1504 տարւոյ մէջ ի գաւառս կատարելի հանրագումարներով եւ վաճառականութեան ու երկրագործութեան զարգացման համար : Սոյն յանձնաժողովը պիտի խորհի կարեւոր խնդիրաց շինութեան եւ ներքին վաճառականութեան յառաջիկութեան համար մաքսային տրոց բարեփոխման , գործարանաց հաստատման ու նոցա ընծայելի ամեն դիւրութեանց վրայ :

—Կարնոյ Եւլըր Երբէնէ թերթը կիւմանայ թէ Երբէնայի կառավարիչը ծանուցած է կուսակալին որ Տէրալիքի բերտերն իրենց կ'առանակին մտ չարութիւնները գործեն : Առ այս կուսակալին եւ կառավարչին միջեւ բանակցութիւնը կը լինին այդ բերտերը ձերբակալելու եւ Երբէնայի դատարանին յանձնելու համար :

—Գաւառական քաղաքացի ուսանց մէջ ծխախմոր հարկադրուած լինելով փակել իրենց խանութները , վասն զի տեղական իշխանութիւնը կը գրաւեն եւ կը բանան ծխախտի տուփերն , ինչպէս ի Սամսոն , Բէժին որոշեր է այդ քաղաքացի մէջ ծխախտի վաճառումն յանձնել քօլէկտորն :

Նիկիտի մէջ (ի Քոնեա) արիւնհակ կը պիւ մը ծաղեր է 50 հեծեալ մաքսախոյսերու եւ Բէժիի դէտերու միջեւ : Հինգ կամ վեց հոգի սպանուեր ու վիրաւորուեր են , բայց ի վերջոյ յաղթանակը դէտերուն մնացի է որը 50 հակ ծխախտ գրաւեր են :

—Վալիկի ընէ եկած հեռագիր մը տեղւոյն օսմանեան դեսպանատան քարտուղարներէն Տիւրքի մէջ Քիլիսի մահը կը ծանուցանէ :

—Հաւանական չէ որ Սելանիկ Վիէնայի երկրաթուղոյ գծին բացուիլ տեղի ունենայ տարեգլխէն առաջ , ինչպէս կրկարծուի ընդհանրապէս : Բ. Գուրը բանիցս յայտարարած է թէ կէտ առ կէտ պիտի հաւանի այդ մասին կնքեալ պայմանագրոց եւ թէ հետեւաբար Սելանիկի գիծը բանեցունել չպիտի տայ , մինչև որ Կ. Պոլսէն ի Վիէնա միացման գծի շինութիւնն աւարտելով , շահագործուիլ չսկսի : Երկու գծերու բացուիլ պիտի կատարուի միեւնոյն օրը :

—Գաշիքէն կը գրեն թէ հաւանական է որ Սըր Չարլզ Տիլը ձմեռն Եգիպտոս անցունէ : Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան նախկին խորհրդականը մտա-

դիր է , կ'ըսեն , Թուրքիոյ քաղաքական եւ զինուորական կացութեան վրայ ուսումնասիրութիւն մը հրատարակել :

—Ռուսական դեսպան Պ. Նէլիտով ընկերակցութեամբ դեսպանատան առաջին թարգման Պ. Իվանովի շարժ օրը կայս . պալատ երթալով պատիւ ունեցաւ Վեհ . Սուլթանին ներկայանալու : Արարողպեա Միւնիր փաշա ներկայ էր այս ուկնդրութեան եւ թարգմանի պաշտօն կը կատարէր :

—Պուլիարիոյ նոր Սուլթանիէին 268 անդամոց 240ը Պուլիար են , 27ը Թուրք եւ մէկը Յոյն : Մինչեւ ցարդ 171 երեսփոխանաց միայն պաշտօնը կամ արհեստն յայտնի է . ասոնց 5ը նախարար են , 27ը փաստաբան , 2ը քահանայ , 2ը խմբագիր , 4ը դատաւոր խորհրդոց մնայուն յանձնաժողովներու նախագահ , 11ը քաղաքապետ , 54ը վաճառական , 50ը երկրագործ , 1ը գործարանատեր , 2ը նախկին զինուորական , 6ը բժիշկ , 5ը կրթական քննիչ , 7ը մնայուն յանձնաժողովոց անդամ , 5ը վարժապետ , մին հօծա , մին նպարավաճառ , 2ը դեղագործ , 5ը թաղապետական քարտուղար , մին նախկին քաղաքապետ եւ մին նախկին դեր քաղաքապետ :

—Փիլիպպէն կը գրեն թէ մէկ քանի օրէ ի վեր ձիւն կը տեղայ Հոտտորի եւ Պալքանի լեռանց վրայ :

—Ելմտական յանձնաժողովը թուրք լըրագրոց միջոցաւ պաշտօնապէս կը ծանուցանէ թէ , թէ եւ պարտուց փոխարէն Թասֆիլիի արժէթղից ամբողջովն ընդունուելու պայմանաժամն աւարտած է , սակայն նկատելով որ առկա պարտուց հաշիւներու քննութիւնը ցարդ աւարտած չէ , կայս . հրամանաւ այդ պայմանաժամ երկարաձգուած է մինչեւ ելմտական 504 տարւոյ օգոստոսի վերջը :

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Ազգային ժողովն ի նիստ գումարեցաւ այսօր (ուրբաթ) ի Մայր Եկեղեցի , ընդ նախագահութեամբ Ս . Պատրիարք Հօր , որ ատենը բանալու պահուն յայտարարեց թէ նորընտիր Քաղաքական ժողովն ընդունած է իւր պաշտօնն եւ գործի ձեռնարկած :

Այս ժողովն զբաղեցաւ Երուսաղեմայ Միաբանութեան վերաբնեւալ կանոնագրոյն յօդուած առ յօդուած քննութեամբ , եւ յետ երկու ժամու վիճարանութեան , նոյնութեամբ քուէարկուեցան այդ կանոնագրոյ 31րդէն 541րդ յօդուածներն :

—Նորընտիր Քաղաքական ժողովն այս երկուշաբթի առաւօտ ի նիստ գումարեցաւ ի Խորհրդարան Վալաթիոյ ընդ նախագահութեամբ Ա.Սեն . Ս . Պատրիարք Հօր :

Ներկայ ժողովականը կարծեաց փոխանակութենէ մը յետոյ դիւանի ընտրութեան ձեռնարկելով , զաղտնի քուէարկութեամբ Քաղաքական ժողովոյ ԱՏԵՆԱՊԵՏ ընտրեցին զՎՍԵՄ . ՄԱԳՍՈՒՏ ՍԻՄՈՆ ՊԵՅ .

Այս , զիւանի միւս անդամոց ընտրութիւնը կատարուելով , ընտրուեցան՝

- Իւր . Ստեփանեայ Իլիաս էֆ . Չայեան
- Ս . Ստեփանեայ Արապեան » Սըվաճեան
- Բ . Ստեփանեայ Յովհաննէս » Թորոսեան

—Երուսաղեմայ Միաբանութեան կող-

մէ Ա.Սեն . Ս . Պատրիարք Հօր ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ յիսունի չափ Լատին կրօնաւորք Բեթղեհեմի տաճարին մէջ Հայոց յատուկ տեղն երթալով սեղանին առջեւ գտնուած գորգերն եւ փոխարէնը բռնութեամբ վերցուցած եւ յայտարարած են թէ Հայք սեպհականութեան իրաւունք չ'ունին այդ եկեղեցոյ մէջ : Յայտնի է թէ ի Բեթղեհեմ Հայոց յատուկ տեղը կը գտնուի տաճարին հիւսիսային կողմն եւ հաստատուած ու ապահովուած է կայսերական հրովարտակներով :

Ա.Սեն . Ս . Պատրիարք Հայրն անմիջապէս Թագրիւր մ' ուղղելով Գատական եւ Կըրօնական գործոց նախարարութեան խընդրեց հրամայել Երուսաղեմայ կառավարչին որ արգելու Լատինաց սոյն անիրաւ ուղնձգութիւնն եւ ազդու միջոցներ ձեռք առնու ապահովելու համար Հայոց արդար իրաւունքներն եւ Ս . Տեղեաց համար հաստատեալ statu quoն :

Երկուշաբթի օրը Ն . Սրբազնութիւն տեսակցութիւն մ' ունեցաւ Գատական նախարար Վսեմ . Ճէվաէդ փաշայի հետ եւ այս դէպքին վրայ խօսուելով , Ն . Վսեմութիւն ըսաւ թէ արդէն գրուած է Երուսաղեմայ կառավարչին որպէսզի պէտք եղածն ի գործ դնէ եւ ապահովեց զՍ . Պատրիարքը թէ այս խնդրոյն մէջ Հայոց արդար իրաւունքները պիտի պաշտպանուին :

—Հիւսիսային Հեռագրական Գործակալութիւնը կը հաղորդէ թէ Մեծայարգ Պ . Յովհաննէս Կ . Այլազովսկի իւր Յորեկանին առթիւ « Քրիստոս Ժողով Իրայ Կը Կախ » իւզանկար մեծագիր պատկերը նուիրած է Բեթղեքսպուրկի Հայոց եկեղեցոյն :

—Բագրեւանդէն կը գրեն մեզ .

« Կարնոյ Պատ . ազգայինք որոշեր են խնդրել Ազգ . Կեդր . Վարչութենէն որ թայլ տրուի իրենց՝ Բագրեւանդայ Առաջնորդ եւ Ս . Յովհաննէս վանուց վանահայր Գեր . Տէր Յովհաննէս Սրբազանն Առաջնորդ ընտրելու . թե եւ այդ որոշումը նիւթապէս եւ բարոյապէս նպաստաւոր է Կարնոյ համար , բայց այդ ընտրութիւնը թէ վանքըն ու վարժարանը կը փակուին եւ թէ 2000 տուն հայեր կը գաղթեն :

—Ա.Սեն . Ս . Պատրիարք Հայրը Թագրիւր մ' ուղղելով Գատական եւ Կրօնական գործոց նախարարութեան՝ նորընտիր Քաղաքական ժողովոյ պաշտօնը վաւերացնող կայս . հրամանագիրը խնդրեց :

Ա.Չ.Գ. — Հայերէն լեզուի եւ այլ եւ այլ ուսմանց մէջ վկայեալ ուսուցիչ պատուաւոր երկուսուսարդ մը պատիւ ունի ծանուցանել թէ պատրաստ է ընտանեաց մէջ դասախօսի պաշտօն յանձն առնուլ չափաւոր պայմաններով : Գիտել ի խմբագրատուն Արեւելի :

